




ԱՍՏԴ-ԱՐԵՎԵԼԵԱՆ



Ա Ջ Գ Ը Յ Ի Ն Գ Ի Ը Կ Ը Ն Ե Ի Ք Ը Գ Ը Ը Կ Ը Ն Ը Ը Բ Ը Թ Ը Թ Ե Ի Թ

Հրատարակում է ամեն չորեքշաբթի օրերը

Տարեկան գինն է Թէհրանում 12 դր. վեցամսեայ 6 դ.
Պարսկաստանի օտար քաղաքները 15 դ. վեցամսեայ 8 դ.
Ռուսաստան 3 րուբլի. վեցամսեայ 2 րուբլի.
Օտար երկիրները 8 ֆռանք. վեցամսեայ 5 ֆռանք:
Հասցէ Téhéran Rédaction ASTGH-AREVELIAN

Թիւ 3
20064266017 Յունվար
1896
ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Խմբագրութիւնը ըստ է ամեն օր ըստ կիրակի եւ
ունի օրերն:
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լուրով. խրա-
քանչիւր ըստ 1 շաբթի:

ԲԱԾԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՍՏԴ-ԱՐԵ- ՎԵԼԵԱՆ ԸՆԴՈՒՆՎՈՒԹԻՒՆ 1896 Թ.

Ա. Տ. „ԱՍՏԴ-ԱՐԵՎԵԼԵԱՆ“ Ա. Տ.

Բաժանորդագիրն է Թէհրանում տարեկան 12 դրան վեցամսեայ 6 դ.
Պարսկաստանի օտար քաղաքները 15 դրան, վեցամսեայ 8 դրան: Ռուսաստան
տարեկան 3 րուբլի վեցամսեայ 2 ր. Օտար երկիրներ 8 ֆռանք վեցամսեայ
5 ֆ: Թէհրանում ձեռքով ծախուածները հատը 6 շահի: Բաժանորդագիրը
կանխիկ է:

Բաժանորդագրութեան համար գիծելուղղակի խմբագրութեան: Téhéran,
Rédaction Astgh-Arevelian.

Մ Ա Ն Ա Գ Ո Յ Թ

Հաճի Միրզա Ճաւադ Աղա Դավթեժի մոջտեհե-
տն վախճանուեց ամսիս տասին:

Այդ կորուստը ոչ միայն խորին ցաւ է պատճառու
պարսկերէնի աշխարհի մէջ, որովհետեւ նա քաջի էր եւ արդարադատ եւ միեւնոյն ժամա-
նակ հանրաժանօք էր իւր հայասիրութեամբ:

Մաղթում ենք որ Աստուած արժանացնէ Նրա
հոգին երկնից արքայութեան, մխիթարէ նրա վշտա-
ցեալ ժառանգներին եւ արժանաւոր մի յաջորդ պար-
գեւէ նրան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Միտանի դիտողներ.---Ներքին Տե-
սնիքին. Գարաջի պարտաւորու-
թիւնները. Անգոյն պատկերներ. Բան-
տարկուած թուումներ. Նամակ Թէհրա-
նից. Ներքին լուրեր.---Ներքին լուրեր.
Աստղ-Արեւելեանի պատասխաններ. Այլ
և այլք.---Յայտարարութիւններ. ԲԱ-
ՆԱՍԻՐԵՎԵԱՆ. Կեանքի պատկերներ:

ՄԻԸԿԱՆԻ ԳԻՏՈՂՆԵՐ

Օրուայ խնդիրներէն մէկն է վեր-
ջերս տեղիս «Ազգային ընթերցարանի»
օգտին տրուած մի երեկոյթի հասոյ-
թի խնդիրը:

Այդ հասոյթը որ առաջ յայտարա-
րուել էր թէ 130 թուման է եւ որ

ապա սկսելով հասաւ 80 թումանի
(հակառակ լուսնի եղծիւներին) գո-
յացել էր մի երեկոյթից, որ կազմա-
կերպել էին մի քանի պարոններ, և
որպէսզի տպահանգներն նրա յաջողու-
թիւնն նրա հետ միացրել էին
նաեւ «Եօզուտ Ազգային ընթերցարանի»
նախագահութիւնը:

Թէհրանցի միջին աստիք երբէք չի
զրացել իւր գրական ամենալաւին
փողն իսկ նուիրելու այն ձեռնարկ-
ները յաջողութեան համար, որոնցից
գիտէ թէ ազգին մի փոքրիկ օգուտ
պիտի դուրս ելնէ, իսկ եթէ երբեմն
նրա տուած լուսնն չի ծառայել իւր
նպատակին, այդ էլ պէտք է վերա-
գրել իւր չափազանց միամտութեան

որով ամենայն դիւրութեամբ խաբու-
ում է իրեն ներկայացող ամեն մի
ազգային դիմակ կողմ խնդրից կամ
անձնաւորութիւնից:

Նրան առաջարկեցին մի երեկոյթի
ներկայ գտնուիլ. նրա առաջ գրին
ծրագիրը և տոմսակներ և նա կար-
գալով այնտեղ թէ ազգային ընթերցա-
րանի օգտի համար է կազմակերպու-
ել այդ երեկոյթը՝ ընդունեց, վճարեց
և սիրով գնաց հանգիստտես լինելու
այնտեղ. բայց թէ մին է այդ «ազգա-
յին» կոչուող ընթերցարանն՝ այդ էլ
պարզում է Թէհրանի բազմաթիւ դի-
տողներէն մէկը:

Մենք ունինք այստեղ երկու ընթեր-
ցարաններ միայն առաջինը որ 1876.
թուականին կազմուեց և որ հաստա-
տուած է ազգային վարժարանի մէջ՝
ունեցաւ իւր երիտասարդութեան
առույգ շրջանը. նրա գրադարանները
լիքն էին մեծ քանակութիւն գրքե-
րով. սեղանի երեսը միշտ զարդար-
ւած էր ամեն տեսակ թերթերով և
վառվառն մի երիտասարդութիւն
ամեն գիշեր կենդանացնում էր նրա
սրահը, բայց ահա ուրտեղից չեմ գի-
տեր գլուխ առած փախչող խնդե-
րի նման մի տարափոխիկ հիւանդու-
թիւն ներս ընկաւ այնտեղ. հետզհետէ
ընթերցանութեան և եռանդալից քըն-
նադատութեան շուրջը բզգաջող մեղու-
ներն հեռացան այդ վարակուած վա-
րերից, տարիներով հաւաքուծ լրա-
գիրները շարքաւորուածներ խոնու-
թեւում և նրանց լուծարողները մօտ
շրջաբերութեան գնացին և որոշեց
որ գրագէտներին իրենց գրած հատոր-
ներին մէջ գնելով գրադարանների մէջ
բանտարկեն, սպասելով որ մեռելու-
թեան փոշին տարիներով գոյ գիշուի
և թաղէ նրանց վերջնականապէս:

Այդ ընթերցասիրաց ընկերութեան
գրադարանն էր:

Բայց ինչպէս ասեցի այդ ընկերու-
թիւնը իւր երիտասարդութեան շրջանն
էր միայն անցել և սպիտակացած
կեղծամով և մօրուքով ապրում էր
դեռ և սպասում էր իւր թոռներին և
ծոռներին մէջ իւր անցեալը վերա-
կանգնուի:

Իսկ երկրորդը որ 1891 թականին
կազմուեց և Բաֆֆի անմահ անունով

կնքուեցաւ՝ գործում է դեռ կանոնա-
ւորապէս:

Գուցէ նա էլ իւր երիտասարդութեան
շրջանն է անցկացնում..... այդ ինչ
վերաբերեալ չէ:

Այդ ահա մի օր յանկարծ ամպերի
միջից մօրեթի նման հրապարակ են իջ-
նում յայտարարութիւններ, տոմսակներ
և ծրագիրներ. ամեն տեղ լսում է---ե-
րեկոյթ յօգուտ ազգային ընթերցարանի
ամեն մարդ կարծում է թէ զառամեալ
ընթերցասիրաց ընկերութեան թոռներն
ու ծոռներն են որ հրապարակ են ելել
իրենց ալիհեր պապի անցեալն վերանո-
րոգելու համար. ամեն մարդ ուրախ
է, որովհետեւ չի կարող ուրանալ թէ
նա ժամանակին մեծ օգուտներ տուաւ
իրեն և մեծ գործեր կատարեց. ամեն
մարդ սրտանց օգնում է նորա վերա-
կանգնման. երեկոյթը տրվում է, մի
քանի օր լետոյ յայտարարուած է թէ
զուտ արգիւնքը 130 թուման է եղել
ապա մի փոքր ժամանակից լետոյ կը-
կին յայտնուած է թէ արգիւնքը 80
թուման է. զարմանք՝ չար սատանայի
նման ներս է մտնում մարդկանց սրտե-
րում.... Ինչ է եղել միւս 50 թու-
մանը....

Ոչինչ, թոռներին ու ծոռներին ներելի
է մի քիչ իրենց պապի հետ համաք
անել: մի քիչ նրան կողպտել....

Է՛հ, հոգ չէ, 80 թումանն էլ
մեծ փող է նրանով էլ կարելի է նրա
կեղծամն ու մօրուքն ներկել և մի
քիչ երիտասարդացնել նրան....

Ո՛չ, եղկելի ծերուկ. քո անուշով
գործող գաճաճ և սուտ թոռներդ ու
ծոռներդ մի քիչ ներկի փող անգամ
քեզ չպիտի տան, քեզ վիճակուել է
մեռնել. իսկ քո գրադարանդ գրքերով
թափառական մկները պիտի կերակրուի
այնքան մինչեւ որ բաւական փող գի-
տուի այնտեղ քո վրայ ցիխէ մի մահաբան
կանգնեցնելու համար:

Եթէ խօսքիս չես հաւատար, հարցը-
րու քո զտաճանքից, որոնց միջից մէկն
գիտել է թէ դու մինչեւ անգամ գոյու-
թիւն էլ չես ունեցել (յանցանքը իւրը
չէր, միտակաւի էր խեղճ) և թէ քո
նման փոտած մի առարկայի վրայ խօ-
սելն անգամ աւելորդ է: Նրանք նու-
մի գրադարան պիտի հիմնեն, նոր գըր-
քեր և լրագիրներ պիտի բնութեն և ու-
տայնի ծաղիկը կոխուած աղբի նման

